



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հոկտեմբերի 2011թ. թիվ 294-Ա

Ա.ՍԻՄՈՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 32, 34 կետերը և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Յաղդանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի 2011 թվականի հոկտեմբերի 4-ի գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Յաղդանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ընտրության համար անցկացված մրցույթը համապատասխանում է հաստատության տնօրենի ընտրության կարգի պահանջներին:

2. Անահիտ Բաբկենի Սիմոնյանին նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Յաղդանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

3. Ա.Սիմոնյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2011թ. հոկտեմբերի 6  
ք.Վանաձոր

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ